

ՅԵՂԱԳՐԱԿԱՆ

ԺՈՐՈՐԻ ՎՐՈՆ ԵՒ ՅՈՐՐՁԸ

Ե.

(ԸՊՐՈՆ-Ն-Ե-ՐԵՆԻ)



Արդուհինն մեկնեցայ երկու Յաճկաց ընկերութեամբ, որոնց մին ծնապանս երեւմիսը գիւղը կ'ուզեալոր որ ես կը գիմեի: Անցանք Շիկիսիէի մարտն, որ Արդուհին սահմանն է, նեկ ու խորտուբորտ ծանապարհներու մէջ 4 օրով թափառելն վերել: Երեկայ եր աղէն երբ հասանք Յընա գիւղը:

Յընա հաստապահն է Ճորոխի ձախակողման եկերայ վայր Ղի հասանքին ուղղութեամբ՝ փոքր աւազուտ դաշտի վայր, որուն մէկ կողմը կը բարձրանայ ապագին բլուր մը՝ ձիթեմէններով եւ այգիներով պատած: Յընա կից է Իլ-Եւթուր գիւղին, որ միւսողին գրեց մէջ է: Երկու գիւղերն ի միասին հազիւ 150 տուն ետեկիւ աւերին, որոնց աւերն ալ թէ ուրք են, կամ ճգազդն են՝ մահմետական — հաւանականաբար վրացի ծագմամբ, թէ եւն այժմ վրացիներն ամենեւին չեն խօսիր:

Չիսպանի առաջնորդաց տարաւ զիս գիւղի մաշիկոսն տունը: Արդուհին գաւառապետ Երիւտով իշխանն ինձ հրամանագիր եր տուած բուրդ գիւղերու մուխթարներուն ուղղեալ, որով կը հրամայէր ծանապարհարդուած ինչի գիւրացներէ՛ պէտք եղած ապրիլականութիւնն ու օրշուժիւնը զգնանալով: Մուխթարը բացակայ էր. ուստի գիւղին լաւօրէն ընդօրոշուած զիս: Եւյց տասի իրեն հրամանագիրս. բայց շափուշ կարդալ չէի գիտեր, յայն ալ՝ ստացին թէ գնացող եր իւր այգին հողալու, ուստի հարկ եղաւ որ ես ինչս կարգաւ իմ բերած հրամանագիրս, որ թուրքերէն լեզուաւ գրուած էր, ինչպէս ընդօրոշուած է գեւ մինչեւ հիմայ կարս եւ Բաթում՝ նահանգաց մէջ: Նապոլէին՝ Բեռլինէն մեծ աղգեյութիւն ունի մահմետական գիւղացի ժողովուրդաց մէջ, որուն խորին հնազանդութիւն կը մտաւայնեն:

Չափուշ առաջնորդաց ինչի եւ տարաւ գիւղին ամենին հարուստ բնակիչն երեքյարկեան տունը: Ցանաւորն յարգարեւելեանցաւ զիս, եւ ինչորոնց որ փոքր ինչ նստիկը տան առէին՝ պարտեղը մինչեւ որ հիւրանոցի սեղ ծառայող սենեակը պատարասուի, եւ ապա ներս մտանք: Քիչ քիչ հաւաքուեցան զբոցի գիւղացիք, եւ սենեակը հիւրերով լեցուեցաւ: Մենեկին պատեն կախուած էր կանթիւն մը՝ որ նոր օրամանակի արդիւնք է. վասն զի յառաջ ոչ որ բարիւղ տեսած էր երբեք, որ այժմ ընդ հանրացած է:

Տնարեք խօսակցիլ, գեղացիք առ հասարակ շատ հետաքրքիր մարդիկ են, եւ անպատճառ կ'ուզեն իմանալ թէ օտարականն ո՞վ է, ո՞ր տեղացի է,

ինչն եկեր է, ո՞ր կ'երթայ, եւ այլն: Այս հարցումները մի առ մի առաջարկուեցան ինչի ալ եւ եւ հոգացուցի գիւրեք: Յետոյ ես սկսայ գիւրեք հարցադնելիլ գիւղին արդիւնաբերութեան եւ իրենց անտեսական վիճակին վրայ: Յընայի գիւրտօր բերքն իւր ընտիր ձիթապտուղն է եւ խաղողը, զորոնք մինչեւ Յիւղին կը տանին իրենք կամ մանաւազ Արդուհին Տայ վաճառականներն: Ճորոխի շուրջին նոցա բուրդ պտուղները նուազներով ի Բաթում կը փոխադրուին: Իրենք իրենց առեկները գրամով կը գնեն կամ պտուղներուն հետ փոխանակութեամբ ձեռք կը բերեն: Հարցումներ արի՛ թէ այն տեղն ինչպէս կը զգան գիւրեքը: Լեւեցի գուհուեան խօսքեր. « Բայց մենք չենք կարող մնալ հոս » եր շատերն կարծիքը: Կը մտածէին զաղթել՝ առանց միտ գնելու որ գաղթելու օրամանակ միջոցն արդէն ուժ տարի է վեր անցիր եր: Բայց գիւղացիք՝ երբ մէկ տեղէն հեռանալու կարեւորութեան նկատմամբ վճռական որոշում մ'որ անէ կամ ներքին համազու՛ առնեն, ի գործ գնելու համար ամեն խորանակութիւն կը քանակեցնեն եւ ամեն գուհուեան ինչ յանձն կ'առնու:

Լաւ կը յիշեմ որ Արդուհինը նախկին գաւառապետ Մեխիթով (Աստղիտացի Տայ կաթողիկէսայ), որ պատերազմին ամսիկապէս վերէն երջուած էր այն պաշտօնին, յայտնապէս կը պաշտպանէր մահմետականները, եւ ամեն հարուստ որ միջոցներով կ'աշխատէր, եւ այս վերջինները չգաղթէին: Մերձակայ բարձրագոյն աստական իշխանութիւնը համարուած էր՝ որ Ցաճկիները կարելու տարբեր մի են երկրին մէջ, եւ չէին ուղէր զգիւրիլ իրենցմէ: Այս մտածմամբ ալ իրիստ հրամաններ արականեցան, որ ոչ որ իրաւաւոր ունի գաղթականներուն առաքա՛ կալուածները գնելու, ոչ այգին, ոչ անոնք եւ ոչ իսկ չէնքերը: Հայերը շահաւոր չհամարին՝ աճան գնով ձեռք բերին Ցաճկաց կալուածները, բայց կառավարութիւնն իւր պատանալքեր կատարէր, եւ բուրդ գնուած հողերն ու չէնքերը իւրեացան եւ առաւելով վարձու տրուեցան: Այս ինչորով մեծ յուզում պատճառեց ջրիտանայի ժողովուրդեան մէջ՝ որ իւր վերջին կրօնիկը, մինչեւ անգամ կանանց զարգերը չէր ինչպա՛ծ՝ աճան գնով անշարժ կալուած մի ձեռք բերելու եւ անով որ ապրուստը հայթայթէր: Համար, քանի որ առեւտրող վերջին ատմիկներն ինկած էր պատերազմին ետեւ: Այս կալուածները գեւ պաշտօնապէս յարգունին չէն գաւառուած, բայց եւ ոչ ալ ետ կը գարձուն գնողներուն, եւ յայտնի չէ թէ երբ կը վերջնայ այս ի կաթ մնացած ինչորն, որ մեծ հարուած է երկրին կանոնաւոր մշակութեան:

Չի գիտցուիր թէ ե՛ւ ինչ գիտմամբ կառավարութիւնն այս հողերը գեւ չէ յանձնած Տայ գիւղացուց ձեռքը: Բայց ես այս կարող եմ վստահ կերպով առել՝ որ, ինչպէս անձամբ մտնել եւ ինչպէս կարելի է միշտ հաստատել, գիւղացի հայր շատ լաւ կը մշակէ իւր կալուածը: Հայտնի գիւղական տունն առ հասարակ բաւական մաքուր եւ կարգաւորեալ է, արար լաւ հերկուած, այգին ինձմուած, պարտեղները հողացուած. եւ այս այն պարզ պատճառաւ, որ Հայն աշխատասեր է: Կը

1 Յես Զննիւթի Անդրեայ, 1889, էջ 240.

2 Կառա՛ ի կամ իմնիկ (առեւտու) կը նշանակէ դեօ (cheft), որ առի՛ կամ իմնիկ կառավարիչները կը կոչուին օպրիշնիս նախնաւ, ցախտօնիս նախնաւ: Բայց ժողովուրդը կը գործածէ պարզապէս Կառա՛նէ:

տեւեռն գիւղացի Հայեր՝ իրենց փոքրիկ կալուածին արգիւնքովը փորք ի շատե բարեկեցիկ, եւ կ'աշխատէր աւելցնել իրենց ինսյոյութեան մեկզի գրանք եւ անշաղք ինքեքը միեռնոյն հողային սահմանաց մէջ։ Հարստացած հայ գիւղացին վաշխառութիւն չ'ստէր, այլ առեւտրայ եւ սիսի՝ մնալով իւր գիւղին մէջ կամ քաղաք անգափոխեւելով, որով միշտ աւելի եւ շատ չի։ Այս եւ պատճառն որ՝ օրինակի համար՝ Արշաւընդ դաւառուն մէջ, ուր 40,000 Տաճկաց հետ կը բնակին միայն 7000 Հայք, այս վերջիններն աւելի մեծ անտեսական ոյժ ունին քան առաջինները։ Հայսն այս առեւտրութիւնն անկայանքի երեւան կ'ելլէ ամբողջ Ազգայնութեւ մէջ, ուր իրեն բնակակից են անգայի ուրիշ ցեղեր։ Այս շատ լաւ յայտնի է նաեւ ռուսական կառավարութեան։ Անցեալ տարի Ասկանիան կառավարչապետ կամ կուսակալ Ալեքս. Գրիգորովիչ-Կորսակով իշխանի յանձնարարութեամբ եւ նորա անմիջական հսկողութեան ներքեւ հրատարակուած «Илутвадителъ по Кавказу» (Աղէցցոյց Կովկասի) Երկ եւ ընդարձակ գործոյն մէջ կը կարգւած. «Գաղաքացիք Հայերը հրամայուին իրենց ձեռաց մէջ ամրիփա՛ծ իրենց օգտին կը մեղմանաւորուած (monopoliser) երկրիս (Կովկասիոյ) բովանդակ առեւտուն եւ արգիւնաբերութիւնը, եւ անտեսական հպատակութեան մէջ կը բռնեն հողագործ Ժողովուրդը։ Բայց այն ոյժն ու նշանակութիւնը կամ հպարտութիւնն որ ունին (Հայք) Ասիայ յառաջագործման ամէն կողմը, չի հիմնուի միայն վաճառականութեան վրայ, այլ նաեւ կրթութեան մասին իրենց ունեցած հպատակութեան վրայ...» (էջ 78)։ —

Բայ տակէ՛ անցեալ 1889 ամի Կաւկասեան Արուեստահազմէն շատ պայծառ կեդրով երեւան հանեց, որ Հայերը բոլոր միւս տեղացի ցեղերը կը զերազանցեն երկրագործութեան եւ հողային արգիւնաբերութեան ամէն ճիւղերուն մէջ։ — միայն չեն այնպէս լաւ առեւտրականք, ինչպէս սովոր են իրենք զիրենք նկատել։

Բայց եւ չեղցայ իմ առարկայէն. պէտք է գաւառով ճանապարհորդութեանս պատմութեան։ Երկրորդ առաւուս կանաւն այս Երիւնյէն։ Տաճկաք (Եւրպական) Ժամն 5ին նախաճաշ էր պատրաստեք, ի մէջ այլոց եւ Ռաճաթը, այն հայկական հնաւանդ իւրականը, բայց ոչ այնպէս ախրթական՝ ինչպէս հայ գիւղի մէջ կերածս։ Երիւնյէն ճորտին անցեալ, ի հուշեց մնացած քարաշէն կամրիշ վայելէ, որուն երկու կողմն ռուսական մայրաքաղաք պահանջներուն հետախուզիչ գէտները կ'երեւային, զիս չ'քննարկէ, բայց Զորեպանիս պայուսակն հարկ համարեցան աշէն անդրնել, թէ եւ ոչինչ գտան արգելեալ։ Օսմանեանց սահմանին հարկն կէս Ժամ հեռու էինք. եւ մայրաքաղաք իրիւս հսկողութիւնն ունէր անշուշտ իւր շարժառիթը։

Այն օրը կէսօրին վերջ հասալ խոր գիւղին, որ ճիշդ սահմանին վրայ եւ Երբեք կ'նկայց մէջ չէի տեսած այնչափ յոգեցեցողիչ եւ անդիւստն ճանապարհ՝ որովք Արշաւընդի Երկու եւ անկէ խուտ։ Ստիպուած էինք կշիւ անտանեկ զառկներն եւ ապա իջնել շարունակաբար. հարթ ճանապարհի,

տափարակ գաշտի հեռքն անգամ չկայ։ Ուշադրութեան արժանի է՝ որ Երիւնյէն 3 Ժամ հեռու խեշք գիւղէն սիւսեւ, որ ահագին ձորի մէջ է ինկած. ճանապարհը կը մտնէ Տաճկաստան, եւ կէս Ժամ Տաճկաստանի մէջ շարունակելէն ետեւ՝ կը դառնայ վերստին կը մտնէ Ռուսաստան։ Այս պատճառաւ խեշքի բլրոյն գաղաթման վրայ մէկ բողոյէ (բժառ = 100 մարդ) ըսկեցեցեց սահմանապահ զօրք է գրուած, որ կը հաշի անշուշտարի վրայ։ Փութբիլ կողմը բաց է, զօրք չկայ, գուցէ եւ պէտք ալ չկայ։ Սահմանը գծուած է բլուրներու վրայ, եւ յարմար տեղանքը իրեւն սահմանադրոյ նշան կանգնած են քարաշէն կոթողներ թուանշաններու կարգով։ Եւ անցալ թիւ 23 կոթողն լոյնէ։ Մարդ առանձին հաճութիւն կը զգայ բոլ կամի անցնելով եւ գաւառովը երկու պիտութեանց սահմանաց մէջ, առանց որեւէ կողմն անմիափորը. հսկողութիւն նշաններու իւր վրայ։ Սահմանադրիւն վրայ տեւտուած այս ապատութիւնն, որ անշուշտ անթափայ իշխանութեանց գիտութեամբ թիւլ տրուած է, աւելի նպաստաւոր եւ օգտակար է Տաճիկ հպատակոյ. ժամն զի այս կողմերու սահմանակից գեղերուն բնակիչներն եւէ Ռուսաստան չանցնին՝ չեն կարող իրենց ապրուստը հայրենայնութիւն։ Սակայն քանի մը տեղեր սահմանագիծ եւէ անյարմարութիւններ կ'ընդունէ երկու կողմը բնակչոց եւ մեծ գծաւորութիւններ կը պատճառէ։ Կայ գիւղ՝ որուն բոլոր պարտեղներն եւ արտերն անցած են ռուսական բաժնին մէջ, մինչ բուն գիւղը տաճկական է թողուած։ Կայ գիւղ ալ՝ որուն մարգերն եւ արտերն մնացած են Տաճկաստանին, իսկ գիւղն անցած է Ռուսիոյ։ Գիւղացիք բնակաւորաբար չեն կարող սահմանները չանցնել իրենց հողերը մշակելու կամ իրենց կառնիքն ու արշաւն արածելու համար. ասել կը ծագին անընդհատ կռիւներ, անհամաձայնութիւններ տեղացոյց եւ ռուսական սահմանակից մարզից մէջ։ Սահմանագիծին կարեւոր կէտերուն վրայ ռուսական ձիւտոր պահապաններ կը հսկեն մայրաքաղաքութիւնն արգելելու համար, եւ այս շատ անգամ անհաճալ դեպքերու առիթ կու տայ։ Իմ ճանապարհորդութիւնէն զիշ յառաջ պոպոկիս դեպք մի տեղի ունեցեր է, որուն վախճանն արեւնահեղութեան է յանգեր։ Քսանի չափ չ'քաւոր գիւղացի թիւրք բռնաբարեց Ռուսաստան անդնելու համար՝ փոխանակ որչ ճանապարհ հնարելու, աւելի կարճ ճանապարհով մտեր են այս կողմն՝ ըստ յաճախ սովորութեան, եւ հանդիպեր են ռուսական պահակներուն, որոնք կոպտակ մ'առաքելու հրացանին են բռնեք զիրենք. թուրքերէն քանի մի հողի վրաւորութեւ եւ սպանութեւ են, մնացածներն պահակներէն երկուքին գէղերը յափշտակիւր փութերն են ետ։ Այս ինդիքին ուշադրութիւն գրգռեց, եւ Բաթիմի տաճկական հիւպատոսարանը միջամտեց, բայց չ'գիտեմ թէ ե՞նչ վերջ տրուեցաւ գործին։

Սահմանաց բաժնեման մի տարրերնակ հետեւութիւնն ալ տեսայ խոր գիւղի մէջ։ Այս գիւղն Օսմանեան իշխանութեան Երկու Ժամն էր եւ Երիւնյէն (Ալեքիս Խոր (Ալեքիս) եւ Սորբիլ Խոր (Ալեքիս)։ Սահմանն այնպէս է գծուած՝ որ Վերինը

կ'անցնի Ռուսիայ եւ Ստորինը կը մնայ Թուրքիայ, բայց միանգամայն Ստորին խոտի մզկիթն ալ մէջ ձեռնէ կը կիսէ: Այս եւ աղջա տեսայ. բայց որովհետեւ Վերին խոտ իւր յատուկ մզկիթն ունի, ուստի բնակիչներն յիշեալ « երկուց տերանց ծառայայթ », տասնորթ թողած են ստորիններուն, այսինքն Ցառնիկ հպատակայ: Արիշ պարագայ մ'ալ նկատեցի այնտեղ՝ որ տաւջինն նուազ զուարճալի չէ: Մզկիթն երկու կողմը կառուցուած են առական եւ տաճական պահականոցին, ուր երկու կողմէն կը մնան, կամ ճշգրտայն եւս՝ հարկ է որ մնան, հինգ հինգ զինուոր՝ ըստ որոյման կառավարութեան: Ցաճական պահակներն իրենց ավելին զխառնութեամբ բոլորն ալ ներկայ էին: Բայց Ռուսոց կողմէ միայն մէկ հողի կար: Ռուսական պահակներն ընտրուած են Ռուսի հպատակ թուրքերէն կազմեալ miliceին կամար զինուորներէն:

Ռուսական պահակ իրէկիթն ընկերութեամբ անցայ եւ Թուրքիայ սահմանն եւ սկսայ գիտել զեղին տներն ու դրըրը: Նոյն միջոցին չիփութեանն ալ սրերց տաճական պահականոցին մէջ, Ստորին խոտն եւ իւր պահականները սովոր էին տեսնել միայն ֆեսուտը մարդէն, կամ՝ մերձակայ գիւղերէն եւ կամ՝ Արշուրըն Տայ մանր տուեալականներէն: Իսկ երբ յանկարծ իրենց առջեւ նկատեցին մէկն եւրպական հագուստով, ամանային յարգեալ զարարկով եւ ուսածայն երկայն կոշիկներով (сапоги) եւ մանաւանդ ակնոցներն աչքին, ամէնքն է միասին թափուեցան իմ կողմս: Պահականոցի իշխարը զիս քաղաքավարութեամբ հրաւիրեց իրեն քով, եւ մտքեւ շնչեցնելով թէ այնպիսի կերպարանքով մէկը կարող է թուրքերէն խօսիլ, նշանացի կը ինքզինքն ինծմէ քաջադատութիւններ. եւ երբ լսեց ու տեսաւ, որ օտարականին իրմէ եւ իւր քով ապշած կեցած գիւղի ժողովն աւելի մարտը թուրքերէն կը խօսի, իսկոյն իւր ունեցած միակ ամսուր բերել առաւ ինձ համար, եւ սկսաւ շատ քաղաքավարութեամբ վարուիլ հետոս պաղ խոր ու պտուղ բերել առաւ, եւ բարեկամացաւ: Չափուն չին յայտնեցի, որ եւ միայն հետաքրքրութենէ շարժեալ եկած եմ՝ Ստորին խոտը գիտելու, եւ թէ քանի մի որ գործերով պիտի մնամ Վերին խոտ, ուր պղնձն եւ կապարի հարուստ քանդեր կան: Չափուն չէմ ծածկեցի զարմանքս, որ մինչ տաճական պահականոցն հինգ պահակայն զինուոր ունի՝ առականային մէջ հազար մէկ հաս կը գտնուի: « Ոչ, տակաւին, նոցա ալ հինգ են, բայց զնոցած են իրենց գիւղերը. երբեմն կը պատահի որ ամէնքն ալ կը հեռանան, եւ այն ժամանակ մինչը ենը կը կը հակեց առական պահականոցին ալ. նոյնը՝ թէ եւ ոչ յաճախ՝ մեր քովն ալ կը պատահի: . . . » Այս քաղաքական տեղեկութիւններ ինքեց, եւ մանաւանդ ուղեց գիտեալ երկու սահմանակից պետութեանց՝ Թուրքիայ եւ Ռուսիայ յարաբերութեանց այժմեան վիճակը: Եւ ի՞նչ տեղեկութեամբ կարող էր զինք գոհացնել:

Ստորին խոտն մինչեւ Վերին խոտ մէկ ժամու միջոց է. եւ եւ երբ գտնուի Թուրքիայէն՝ յայց ելալ Վերին խոտի մզկիթը: Հինքն անշնամ էր. պատերուն վրայ փաղցուած էին առաւ կառավարու-

թեան հրամանագրերն՝ ժողովրդեան ուղղեալ, այսինքն Թուրքերէն գրուած զանազան ներքալ կարգադրութիւններ: Երկու խոտերն ալ ինկած են ահագին ձորի մէջ եւ խորաւորտ անշա հողի վրայ են կանգնած: Ռուսի մզկիթն առջեւի տափարակ զաշտն այցելուն վրայ շատ լաւ տպուկութիւն կը թողու: Օրն ուրբաթ էր, գիւղէն բովանդակ ժողովուրդը սաղմուխ էին եկած եւ նշուած՝ նոյն տափարակին մէջուց հակայորէն կանգնած՝ յաղճ ոտուղին (plateau, platane) արմատներուն վրայ: Այս ծառն, որ հաշակուած է բարբր նահանգին մէջ, եւ մինչեւ անգամ մուտ է գտնոր Ցաճկաց նահանգային սաղմուխէն մէջ, 60 թիւ շարձապատ ունի, ինչպէս եւ շարիցի: Իւր ահագին հասական ու երկնաբեր զազաւթամբ կատարելապէս կը համապատասխանէ սոսկի բարձրաց որ գիւղն երկու կողմէն ամրամակած են: Երկու խոտերն է միասին՝ ընդ ամէնն 250 տուն բնակիչ ունին. Վերին խոտն առանձինն 170 տուն՝ ամէնն ալ մահմետականը՝ վրացի ծաղմամբ, եւ ընտանեկան լեզու է իրենց՝ վրացերէնը:

Մի թաղ միայն չէ խօսիք վրացերէն, այլ թուրքերէն: Թաղերն իրարմէ բաժնուած են բնուրներով՝ եւ ձորերով՝ եւ բնակեցւոյ 15 որ Բեյլիթ թաղն, որ նշանաւոր պղնձի հանքերն են, եւ որ իւր դրերը կատարելապէս արժանի է այս կոչման: Խոտի բարձրաց գլխաւորն ալ կը իրաւի Գռնիթ Կալ, եւ իրօք այն տեղ խալը բար մի կայ հակայանէ: Թէ ինչ պատճառաւ այս հայերէն անունն աւեր է՝ ոչինչ կարող եմ ասել:

Նստցիք յետոս տաճանին ալ քառ են եւ կ'ապրին՝ իրենց պարտէի պատիւները (խալը, ինձոր, սալը, հուն եւլայն) մերձակայ հացաւտ Օլիթի եւ Արտահան գաւառները տանելով, եւ այն տեղ ցորենն եւ զարւոյ հետ փորձառիւրով: Այս փորձառութիւնն ալ կը պահանջէ որ ամէն գիւղացի մէկ կամ աւելի էշ եւ ձի պահէ: Արտեր թէ եւ ունին, բայց շատ անշնամ տարածութեամբ են անբեր: Բարբրախտաբար երկու տարիէ ի վեր խոտի պղնձն եւ ցինիի հանքերը չահագործուելով՝ տեղացի ժողովուրդն առաջին անգամ տաակի երես կը տեսնէ:

(Ըարաւալիւն):

Կ. ՅՈՒՆՍՈՒ



ԳԻՏԱԳՈՒԹԻՒՆ ՄԷ

Հալիթիս այս տարւոյ առաջին թուրք մէջ (էջ 17) կայ Սարգիս Սարաֆիանս Արեւիկա-կոպտայն տաղանագիտը: Մտաղիք կ'ընենք՝ որ նոյն տաղանագիտայն բառերու սեանց սկզբնագիրները հետեւեալ իւրաց կը կազմեն. Սարգիս, Հարգահմ

¹ Բայց այնպէս աղաւաղեալ՝ որ բառերուն կենն աւելն թուրքերէն է: Օր մի իմ առնէն խոտից մ'իւր դրացուն կը պատմի վրացերէն լեզուաւ քաղաքի մի վիշակը, եւ իմ խօսքերէն հետեւեալ պարբերութիւնը քաղեցի: « Իմ ցոյց կու տայ իրենց լեզուն կերպարները. » Եւսալ քաղաք էր թէ մի պարիկն ալ: (մէկ հիշեալ հայն)